

նի մը գնահատուիները՝ որոնց նպատակն էր ցուցնել, թէ Հայերը դիմացկուն թշնամիներ չեն» (էջ 150)։

Մանրակրկիտ քննութիւն մը՝ կարող պիտի ըլլայ ցուցնել յոյն պատմագիրը իբր իրողութեանց խեղաթիւրող։ Ինչ պատճառ ունէր նա սակայն Տիրգրանայ նկատմամբ արդարութեան դէմ մեղանշելու։

Հիւլէն մտաւորականին համար անհաճոյ էր միշտ գերութեան յիշատակը, բայց մանաւանդ երբ գերողն էր «բարբարոս» մը, որ այնքան գոռոզ ալ էր ու վճռական, և որ երկոտասան յոյն քաղաքներ հիմնայատակ ըրած էր։ Տիրգրան Բ. Հիւլէնները կը սիրէր և Շահ — Արաս՝ Հայերը, բայց թէ՛ Յոյնը և թէ՛ Հայը անխրաւեցան անոնց դէմ՝ տիտուր յիշատակ մը միայն պահելով զիրենց բռնի գաղթիւ տուողներէն։

Յանհունս կարող է երկարել մեր քննութիւնը՝ եթէ ամէն սող վերլուծենք և Կ'եզրակացնենք. Noël Dolensի և Khatchի «Հին Հայերու պատմութիւնը» սրբագրելի է նիւթի տեսակէտով, անկատար ձեւ կողմանէ։

Բայց աշխատութիւնը միշտ թանկագին է, և կարող էր գլուխ — գործոց մ'ըլլալ՝ եթէ պ. Khatchը եւրոպական միջավայրի դիւրութիւնները վայելէր։ Հայ Սասանդական Միութիւնը պիտի ընձեռնէ իրեն այս միջոցը։ Կործին հրատարակչները պիտի փափագին անշուշտ՝ զայն իր լաւագոյն ձեւին մէջ ի լոյս ընծայել։

Հայոց Պատմութիւնը հսկայ քայլ մը կ'առնու դէպի յառաջ, — ինչ որ չի նշանակեր՝ թէ նպատակին հասած ըլլայ։

Հ. Կ. Տ. ՍԱՀԱՅԱՆՍ

Դէպ ի երկինք բարձրացած աչքերը միշտ գեղեցիկ են, ինչ ալ ըլլան։

Անհատութիւնը մտքի արտ մ'է, ամբարշտութիւնը՝ սրտի։

Տաղանդը մեղու մ'է, սրամտութիւնը՝ թիթեռնիկ մը։

Հարցումները՝ մտքի ընդարձակութիւնը ցոյց կու տան, պատասխաններն՝ անոր նրբութիւնը։

ՓՈՒՊԵՌ

## Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ինչ անոյշ է շարել չափուած բառեր, և թափել անոնց վրայ բանաստեղծի մըտքին բոյրը, և լսել մտքերու ծաղկաբանէն՝ երգին ներդաշնակութիւնը։

Եւ ումէն ուսուհայ զրիչ շարժող՝ գինովցր է տաղաչափականին ներշնչումովը, չափուած բառերու քաղցրութեամբ մագնիսացած և երգած։

Յիսուն տարի առաջ Արովեան շրջանին՝ դիւրին էր սագին ձայնով ուշազբաւ ըլլալ, երգիչին հոգին կը քննէին, ո՛չ երգին հրապոյրը, Նորագոյն քերթողներու խառնամբոխին պարագլուխ Յ. Յովհաննիսեան, խստապահանջ քննադատութեան դարուն մէջ կը զարնէր իր բամբուրը, երգը հիներէն ստրված էր։ Նորութիւն մը չունէր, ու մենք նորութիւն կը սպասէինք։ Ուր էր թէ բնաւ երգած չըլլար գարունը և ինկարոյր ծաղիկները, կարևաչափու վտակը և կանաչագոգնտ բլուրները, չքնաղ կոյսը և անոր սէրն ու համբոյրը։ Ուր տեղ ցոյց տուած է անտանելի միօրինակութիւն. առ հասարակ կարելի է ըսել որ Պ. Յ. Յովհաննիսեան փափաքի ու մաղթանքի երգիչն է եղած. իր մէջ վերին աստիճանի գնահատելի է քնարին անկեղծ շեշտը. ինքն իր բերնով թող ըսէ, թէ ինչ է իր գաղափարականը։

«Աղբատութիւն ես սիրեցի,  
Խեղճի լացը, հառաչանք,  
Ես՝ քննարկի նուիրեցի  
Վիշա երգելու և սանջանք»։

Ուրեմն հանրութեան ցաւերուն երգիչն է ուզած ըլլալ. փափաքներ է, քան թէ եղած. ինքը խրատող է աւելի, քան թէ լացող ու հառաչող։ Վիշտը, ցաւը, տառապանքը երգելու համար, գթութիւն շարժող կողով չունի. լացեր է, բայց չէ կըրցած լացընել։

Հիացող մըն է Գամառ Քաթիպայի, Պոռչեանցի և Շահագիգի, անոնց հոգին

կը սրսկէ իր լարերուն վրայ ու կ'երգէ  
այն խանդով ինչ որ իրեն յատուկ է :  
Անոնց պէս սիրած է հայուն մեծ սրբավայր  
Էջմիածինը, ազգին աւետարանական հո-  
գին և աղօթքի է անկեղծ աշուղի մը գո-  
րովաշարժ երգով : 169 էջերու միջև, Աէր  
ու Հայրենիք աւելի ձայն ունին :

\*

Ամէն բանաստեղծ՝ Հայնէէն սկսեալ՝ իր  
հարին համար քնարով դրախտ մը կը  
ստեղծէ, և այն երանութեան մէջ ծայրա-  
յեղ ինքնամոռացումով, կ'երգէ գեղը, սէրը  
իւր տարփանուշին : Խեղազար քնարը՝ ըստ-  
րուկ կը դառնայ դիցանոյշ հարին ոտքը,  
գերբնական մտքեր կը փնտռէ որ կարե-  
նայ տալ յաջող ու նրբակերտ պատկերը  
հարին գեղեցկութեան :

Պ. Յովհաննիսեան սիրային այդ տեսակ  
նկարի մէջ յաջողած է, իր Մ-ին երեսը  
գոհար շիթերով ոտոցելու համար կ'ուզէ  
ըլլալ կարկաչուն վտակ, զբախտի բու-  
րումով վճիտ ալիք, առաւօտեան յստակ  
ցօղ : Դեռ ինչ կ'ուզէր ըլլալ .

« Կ'ուզէի լինել սօսի հովասուն,  
Համարձակ փռուած կանաչ սաղարթով,  
Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն  
Հովանի լինել հեղին ըրչիւնով ...  
Կ'ուզէի լինել սիրահար սոխակ  
Եւ ձեռքիդ գերի, փանցակուժ փակուած,  
Ականջիդ հնչել հրաշալի նրւագ,  
Միզով օրօր ստել քո հոգան զմայլուած » :

Եւ կ'ուզէ ըլլալ ամօթխած լուսին և  
արծաթի փայլով հարին մագերը շոյել ,  
անոր այտերը գգուել . կ'ուզէ որ իր հարը  
ըլլայ կախարչական տաճարի Անահիտ և  
ինքը պատրաստ է անոր գեղեցկութեան  
երկրպագու ըլլալ : Ու մարդկային արժա-  
նապատուութիւնը ծայրայեղօրէն կը ստու-  
րանայ անըջական պատրանքի կուռքին  
առջեւ : Ու միայն Պ. Յովհաննիսեանը չէ,  
ամէն քնար՝ խորրոտ կամ հեզուկ՝ ստրու-  
կացիք է այդ կուռքին առջև :

Քաղցրահնչակ է Պ. Յովհաննիսեանի  
առ Մ. ուղղած՝ իր քերթուածը . նման  
արձագանգ մ'ունի ուրիշ մէկ փոքրիկ

բանաստեղծութիւնը, անոյշ հառաչներով  
երազանքի պատկերներ կը ստեղծէ .

« Ախ, սուէք ինձ քաղցր մի քուն .  
Կեանքից հետո՛ւ սըլանում  
Այն աշխարհը, ուր խնդութիւն,  
Ար սէրն է միշտ անթառամ,  
Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,  
Վառ կանաչից իմ վերմակ,  
Գոցա բոյրը զբարթագին  
Ծծեմ անվերջ ես անյազ :  
Եւ խաչաւով իմ ստաշին  
Վառակն անուշ խօսելէ,  
Մի Քարմութիւն եղեմային  
Չորս բուրբոս տարածէ » :

Քնքուշ բաղձանք, հոգեզմայլ հրեռանք  
ցոյց կու տայ այդ երգին մէջ, գորովով  
սիրով կ'ուզէ ողջագուրուած ապրիլ, ծծել  
երջանկութեան քաղցրութիւնը , կ'ուզէ  
զտնել փաղարջանք և սիրելիէն լսել մեղմ  
մեղեդիներ :

Անհատնում են սիրային քերթուածնե-  
րը, ինքը զմայլած է, յափշտակուած իան-  
գավառութեամբ կ'երգէ, իրեն մտիկ ընող  
գուցէ միայն ետքն է, իտէպական հարը  
անշուշտ : Յիշեալ երկու սիրային երգերու  
հետ անյիշատակ չի մնար « Ալագեանք » .  
պարզութեամբ , բնականութեամբ սրտի  
հետ կը խօսին այդ երեք երգերը : Ոսկի-  
ներու, ազամանդներու շոյալքը չի կու-  
տակեր անոնց լարերուն վրայ, խաղաղ  
ծովափին մեղմ ալիքներու կարկաչը կը  
յիշեցընեն : « Ալագեանք » ի քնարը աշուղնե-  
րէն փոխ է առած .

« Ալագեանք բարձր սարին  
Ձին և կիտուել կատարին .  
Սարի ճամբէք, բաց էէք ,  
Էթմա՛, հասնեմ իմ ետքին :  
Ախ, իմ ճամբէն քորտա ա,  
Սիրտս էրուած, խարտա ա .  
Ղարբի օրն ըլնի սև, —  
Աղիք հարի կարօտ ա :  
Իարխտ սեսայ, լալիս էր,  
Լալես, զլիին տալիս էր .  
Ճամբայ սուէք, մյ սարեր,  
Ձեռով արի՛ գալիս էր :

Ին ե՛նչ դուշ և էն քարին...  
Սիրտս կախում ա արին,  
Այ իմ թաւան, թե տուր ինձ  
Թոռնեմ, հասնեմ իմ ետքին » :

Բանաստեղծը սէրը երգելու մէջ կարծես կը մղուի քերթողական բնագոյնն, չէ՞ որ քնարերգուն պէտք է երգել սէրը, կարծես իբրև պահանջ ինքը երգած է. յաջողները ինչպէս ըսինք քիչ են. մեծ մասը նոյն միտք, նոյն ընթոյշ բառերու կոյտ:

\*

Ուրախ քնար չէ Յովհաննիսեան. ուրախանալու օրերը անցեր են, վշտերը կը ծովանային. բանաստեղծի հոգին հանրութեան ցաւերու ծովը կը դառնայ, Հասարակաց կարմիր ու կրակոտ ցաւը սուգի շղարշ մը ձգեր էր անոր հոգեկանին վերայ, և ինքը կ'երգէր հայրենիքի տառապանքը: Իր « Գիշերուան երգը » հովին հետ խօսակցութիւն է. բանաստեղծը թաղծալից փակուած է սենեկին մէջ, կատաղած քամին իր լուսամուտը կը ծեծէ. առոր կը հարցնէ թէ ի՞նչ է իր կատաղութեան նպատակը, թէ ինչո՞ւ եկեր է. ու քամին կը պատասխանէ. թէ՛ հայրենի ցաւեր սփռող զուժկանն է, արիւնաներկ հովիտներէն նուէր կը բերէ ոչ փնջեր վարդի. այլ հայուն ճակատը պսակող փըշալից ահեղ պսակներ. և կ'ըսէ.

« Ես ունեմ եմ չորցած դաշտերից,  
Ուր հին աւերակ նոր աւերակին  
Միշտ սեղ է աւելի, բոլոր կրծքերից  
Լոկ հառանգը է թալուժ գտնապին ».

Հայ չարչարանքի աշխարհէն կու գայ, հոն վատերու անզուպ կիրքերը սահման չունին, թիւ չի կայ բռնութեան զոհերուն, հոն վարդի կոկոնը ոսկի արևուն շողը չի տեսած կը թօշնի. ու բանաստեղծը յոյս ունի թէ հոն փրկութեան գարունը նորէն կը ծաղկի:

Պ. Յովհաննիսեանի Համար հին Հայութեան մէջ հայրունի հոգին աւելի անկեղծ է, աւելի նուիրական, միթէ ճի՞շդ է բանաստեղծին այս կշտամբանքը.

« Ձեր նահնգը էլ էք նժման դոս, հայեր,  
Չունիք այլ ես հայրենասէր այն ուրին.  
Նոքա մնան, և կուրծքեր անվեհր  
Արեամբ բուսած անվաճ վարդեր պսակեցին:

Նոքա զուլի չըտուցին բռնութեան,  
Ազատեցին նոքա խիզը և սոսթ,  
Ազատութեան երկրպագու կանգնեցան,  
Հաստատով փառքի լուսոյն անաղաս:

Նոր հայութեան մէջ վեհ անձնանուէր զգացմունք չի գտներ, դառնացած կ'այպանէ նոր սերունդը. բայց չի՛ չափազանցեր: Նոր սերունդը, նոր հայութիւնը չի յղացաւ վերածնունդի դարը, ինքնանաւաչութեան պատմական և գրական շրջանը: Ուրիշ խնդիր է թէ չունեցանք խիզախ զէմքերու արժանաւոր յաջորդներ: Նոր հայութեան երեսին զարկած այս տողեր՝ տարօրինակօրէն իմաստակ յոռետեսութիւն մը կը համարիմ.

« Դո՛ւք ի՞նչ արեք, դո՛ւք, փառաւոր նախորդաց  
Ստրուկ ծընած, անփառք սընած զաւակներ.  
Հայ սար, հայ գետ, հայ դաշտօրայք շունչ առած  
Պիտ ամօթով այրեն ձեր սև երեսներ »:

Իսկ այս վերջին տողերը մտածել չե՞ն տար.

Ազատութեան սուրբ պատկերը կործանած,  
Դո՛ւք ծագում էք ազատաւոր ըզգոցմունք.  
Նոր Բազկերտի անաղպ բազին էք կանգնած  
Եւ խալտատակ կատարում էք պաշտամունք:

Ո՞վ ի նկատի կ'առնէ, որո՞նք կ'ուղղէ իր այս ոմբաքարիքը, եթէ կան ազատութիւնը բնաբարողներ և նոր Բազկերտներ, թող արժանանան բանաստեղծին արդար անէծքին:

Իր զինուորին մահը՝ կենդանութիւն է. չենք կրնար ըսել որ այդ զինուորին տիպար կտրիճներ չերեւցան, մեր մարդիկ հայրողիներ վաշտականները չի մոռնանք: Բանաստեղծը մայր հայրենիքի բուրդանուէր զինուորին մէջ, շատ ազնուական հոգի մըն է զրած. գորովական է զինուորին ըզմանքը. ան իր օրհասական ժամերուն կ'երգէ.

« Եւ թող ես գրկած կուրծք մայրենի,  
Քո ազա կուրծքը, սիրուն հայրենիք,  
Փրկմանմ մինչև ականջիս հասնի  
Քո ազատութեան անշո աւետիք.  
Ես այն ժամանակ կ'ինեմ և պայծառ  
Արեւը տեսած՝ իմ բաղդը կ'օրհնեմ,  
Որ, ի՛մ հայրենիք, միայն քեզ Համար,  
Քեզ Համար միայն կեննքս զոհել եմ... »

Այդ կտրիճները յարութիւն պիտի առնեն յարգանքի դրախտին մէջ. ազգային երախտագիտութեամբ պիտի յաւելրժանան:

Հայրունի սէրը զինքը կը մղէ կտրիճութիւն հոսեցընելու հայուն երակներուն մէջ. չուզեր որ վհատի հայը: Հայրենիքի բաժին են ընկած սուգ, աւեր և սարկութիւն. պէտք չէ ահարեկիլ: Կը հաւատայ որ չի մեռնիր սուրբ գաղափարը, ասոր հաւատացողը անմահ է. կը խրախուսէ որ անբողոք հայը անվհատ առաջ երթայ, փոյթ չէ, եթէ խորտակուի հայուն նաւը, բաց ովկիանոսին մէջ. թող հայուն գլխին զայրանան ահեղաշունչ մըրկիներ, և մոլեգին յորձանքը թո՛ղ թողէ հայուն դին:

«Բայց հաւատ՛, դու չես յաղթուած, ոչ ոյժն յաղթող — Եւ նոր քաղեր կ'իշենն անշուշտ ցեղ յաւորող»:

Ու պահ մը կը յուսահատի, տառապանքը գազանորէն կը խուժէր հայ երկրի վրայ, ոչխարի պէս խողխողուող հայութեան հառաչք ամենի սոսկումով կը լսեցընէր մեծ վայնասուռնին գերեզմանական ողբը: Հայը սպասեց, շատ սպասեց՝ որ վերջը գայ իր դարաւոր տառապանքներուն. և յոյսերու ամենէն վառ ժամանակներուն՝ արիւնի կատաղած ծովը կը ծածկէ հայութիւնը. ու բանաստեղծը իր յոյսը չուզեր կորսեցընել. կը սպասէ փայլուն օրերուն, կեանքի և յարութեան արշալոյսին:

«Եւ ըսպատում ենք, ըսպատում կրկին, Որ արեան գաշտում փթըթին վարդեր, Որ որոտացող թիպամած երկին Երկրին ուղարկէ անձրև կենսաբեր...»

Ամբողջ յոյս է, ամբողջ խրախոյս: Հայուն համար կը հառաչէ. խրատներ կ'երգէ, կրօնական կրակը կ'արծարծէ:


\*

Բարի սիրտ, պատրաստ է նկարելու մեր կեանքի ազաւոր պատկերը, գոյն չունի, ոյժ չունի, շունչ չունի, բայց ունի յատկութիւն մը, բարձր գերապանծ յատկութիւն մը. Սիրտ: Կը սիրէ երգել մեր

կեանքը, կը սիրէ հայուն մարտիրոսացած հոգին, որուն ընծայած է իր ցնարը:

Ռուսահայը կը սիրէ այս բանաստեղծը որուն ցնարին վրայ չին դիտեր ձեւ, գեղարուեստ, հրապոյրը չեն զգար իր սազն: Բայց կը տեսնեն որ ազնուական Սիրտ մը կը տրոփէ իր ցնարեղբուկեան մէջ:

## Ս.Ի.ԵՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ



Բանաստեղծը հոգեզմայլ ժպիտով ձեռքը նամակ մը ինձի մօտեցաւ, կը տեսնէք ինչ կը գրէ. կ'ըսէր ինձի: Նամակը վիհնեայի յարգելի Մխիթարեանի մը ստորագրութիւնը կը կրէր. պարունակութիւնը ճոխ գովեստ մ'էր բանաստեղծին: Սուրճերնիս խմեցինք, և անցանք դուրս ելանք դռնէ մը, որուն վրայ «Աստ լուծիւն է պահելի» գրուած էր: Կը ձեմմնք նոճիներու ուղիղ ճամբէն: Տժգոհ է բանաստեղծը. իր տեղացի մատուր դեռ չէ ըմբռնած իր ցնարին յարգը. դեռ նոր էր. «Հանդէս Ամսօրեայի», «Տարազի» և հին «Մուրճ»ի մէջ երկու երեք փոքր ու երկսոց թերթուածներովը չէր կրնար ժողովրդականաւ. մեր այդ տեսութեանէն տարտարի վերջը, հիմայ լոյս կը տեսնէ իր քերթուածներու կոկիկ մէկ հաւաքածոյն՝ 288 էջերէ կազմուած սիրուն գիրքը: Եւ արդէն այս վերջին տարիներու մէջ կովկասեան մամուլն ալ գնահատումի էջեր սկսած էր նուիրել բանաստեղծ իսահակեանի որուն ախորժելի է գովեստի համը:

\*

Իր քերթուածներու շարքին մէջ, սրտի զպչող երգեր ու վէրքերը միայն իր ներքին հոգեկան հիւանդութեան Հծծիւնը չեն, հոն խառնուած է հայութեան վէրքերուն ու երգերուն սեւ ու կարմիր գոյները: Բայց իրեն հետ կարելի չէ տխրիլ յուսահատիլ. իր հոգեկան վէրքը շատ խոր